

Յայսմ առաջնոյ անուր Նորոյ տարւոյ 1881
Յորում հանդիսիւ մտանէր 'ի Մայր Եկեղեցին Լիպուռնեայ
Եւ յաջորդէր յեպիսկոպոսական անոռ նմին Թեմի
ԱՐՃԻԱՊԱՏԻՒ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՐԵՄԻՃԻՕ ԲԱԶԻՆԻ
նմա

Մեսրոպ Ֆր. Վարդապետ Ուղուրլեան
Զդոյզն տողս զայսոսիկ խոնարհ յարգանօք ընծայէ ձօնէ նուիրէ

ՆՈՒԱԳ

Ա.

Ո՛վ, զիարդ է գեղեցիկ այս ամանոր,
Բնութեան քանի՜ հրրճուանք զուգին աստանօր.
Դէմք են զըւարթք, սիրտք սիրաբուղիսք, օր պայծառ,
Քարոզեն այնք ըզգալուստ Հօր գերափառ:

Բարեան գալուստդ, ո՛ր ցանկալի մեր Հովիւ,
Առ քեզ մեր աչք ըսպասէին տեսանել.
Եկիր խաղաղ Տեսաւն օրհնութեամբ եւ շնորհիւ
Լիպուռնական հովուել ըզփօս աններել:

Աղէ՛ յերկնից, ով հանճարոյ դու հրեշտակ,
Ազդեալ յիմ բանս զարքենի շունչդ յօժանդակ
Ներբողենիս որքան արժան է խօսել:

Այդ զուարթութիւն կերպարանացդ գրաւ է յար
Մեծի սիրոյ եւ գրթութեան առ որդիս,
Որք Հօրդ մաղենն բարօրութեան ամս յամայր:

Բ.

Ի գումարել պէս պէս տիոց զայս ակումբ՝
Շրնորի ունին զընտրութենէ՛ն նոր Հովուիդ,
Մըխիթարեալ անձինք նոցա 'ի խինդ սուրբ
Ուստեն յաւերժ սիրել ըզքեզ ամրապինդ:

Մինչ դու կեցեր ըստ անուան քոյ վարուք հեզ
Խաղարարար, վարժեալ յուսմունս անձանձիր
Նախանձելի առաքինեացն 'ի հանդէս
Անձկաւ աշխարհս համբաւոյդ կաց ուշադիր:

Ըզքեզ յայնժամ Գահուս այսմիկ հայրապետ
Կարգեաց Աստուած՝ հաճեալ ընդ քեզ յերկհաշէնն,
Աստ ըզգլխովդ ըզարդենին մըրգաւետ
Պըսակ կապեն քաղաքացիք համօրէն:

